Հավելված
ՀՀ հաշվեքննիչ պալատի
2024թ. հոկտեմբերի 31-ի թիվ 98-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ 3 էջ
2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 5 էջ
3. ԱՄՓՈՓԱԳԻՐ 6 էջ
4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 8 էջ
5. ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ 9 էջ
6. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ 11 էջ
7. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ 14 էջ
8. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ 17 էջ
9. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 18 էջ
10. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 20 էջ

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը[1]	Հաշվեքննիչ պալատի 2024 թվականի հուլիսի 18-ի թիվ 77-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:
Հաշվեքննության առարկան	2024 թվականի պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք, «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» № 318-Ն որոշում, ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» № 2323-Ն որոշում, ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» № 728-Լ որոշում, ՀՀ ֆինանսների նախարարի 2019թ. մարտի 13-ի № 254-Ն հրաման և այլ իրավական ակտեր:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2024 թվականի հունվարի 1-ից 2024 թվականի հունիսի 30-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2024 թվականի օգոստոսի 1-ից 2024 թվականի հոկտեմբերի 31-ը ներառյալ:

[1] *«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սույն Ընթացիկ եզրակացությունն օգտագործվում է ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը կազմելու համար:*

Հաշվեքննության մեթոդաբանությունը[2]	Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն է իրականացվել համապատասխան մեթոդաբանությունների և պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների ու տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն:
Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է Հաշվեքննիչ պալատի երրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Գագիկ Բարսեղյանը:

[2] *«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Հաշվեքննիչ պալատի հաշվեքննությունների մեթոդաբանությունները հիմնված են Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) սկզբունքների, ստանդարտների ու ուղեցույցների վրա:*

2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՊ	ՀՀ հաշվեքննիչ պալատ
ԱՆ	Նախարարություն
ԱՐՄԵԴ	Առողջապահական էլեկտրոնային համակարգ

3. ԱՄՓՈՓԱԳԻՐ

Նախարարությունում 2024 թվականի պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության հաշվեքննությամբ արձանագրված ուշագրավ փաստերն են.

1. 2024 թվականի հունվարի 1-ից սկսած փորձարարական եղանակով մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը պայմանագրային գումարի չսահմանափակման սկզբունքը, ի լրումն մինչ այդ 5 միջոցառումների՝ կիրառվում է նաև ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի «Առողջապահություն» բաժնի 18 միջոցառումների համար:
2. Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության ու սպասարկման ծառայությունները շարունակել են ձեռք բերվել գներով, որոնց ձևավորման համար չեն պահպանվել սահմանված իրավական պահանջները: Նախարարության կողմից բժշկական ծառայությունների դիմաց վճարումները կատարվել են գներով, որոնք չեն ձևավորվել բժշկատնտեսագիտական ուղեցույցներով, միջին շուկայական գների ուսումնասիրությամբ, ակտուարական հաշվարկներով և/կամ սահմանված որևէ այլ եղանակով հիմնավորող մեթոդաբանությամբ (Մանրամասները ներկայացված են սույն եզրակացության VI բաժնում):
3. Նախարարության կողմից չի պահպանվել «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը, համաձայն որի «Կազմակերպությունները պարտավոր են հաշվապահական հաշվառումը վարել հաշվապահական հաշվառման ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու հնարավորություն ընձեռող համակարգչային ծրագրերով», ինչի վերաբերյալ Նախարարությունը հայտնել է, որ 2024 թվականի ընթացքում նախատեսվում է անցկացնել գույքագրում, ինչից հետո հիմնական միջոցների հաշվառումը նույնպես աստիճանաբար կսկսվի իրականացվել հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտին համապատասխան (Մանրամասները ներկայացված են սույն եզրակացության VI բաժնում):
4. Նախարարության պաշտոնական կայքէջում սահմանված կարգով և ժամկետում չի հրապարակել պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող առևտրային կազմակերպությունների 2023 թվականի տարեկան ֆինանսատնտեսական հաշվետվությունները, դրանով իսկ չապահովելով տվյալ բնագավառում օրենսդրությամբ սահմանված նպատակի՝ ֆինանսական հաշվետվողականության բարելավման իրագործումը (Մանրամասները ներկայացված են սույն եզրակացության VI բաժնում):

5. Առանձին միջոցառումների համար հրապարակային օֆերտայի եղանակով կնքված պետական պատվերի պայմանագրերի շրջանակում Նախարարությանը մատուցված ծառայությունների ընդհանուր արժեքները որոշ դեպքերում գերազանցել են պետական բյուջեի 2024 թվականի 1-ին կիսամյակում տվյալ ենթամիջոցառման համար նախատեսված ընդհանուր գումարները: Այդուհանդերձ՝ Նախարարությունը հրապարակային օֆերտայով կնքված պայմանագրերով սահմանված կարգով և ժամկետներում չի ծանուցել կազմակերպություններին՝ վերջիններիս կողմից տվյալ ծառայությունները մատուցումը դադարեցնելու և ծառայության կարիքը հերթագրելու նպատակով (Մանրամասները ներկայացված են սույն եզրակացության VII բաժնում):

4 ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ[3]

2024 թվականի 1-ին կիսամյակում հաշվեքննության համար էական նշանակություն ունեցող հարցերի՝ պետական բյուջեով նախատեսված միջոցառումների (ընդհանուր 52,249,918.38 հազ. դրամ) փաստացի ծախսերի մասով անալիտիկ տվյալների (ըստ շահառուների (նշելով անձի իդենտիֆիկացիոն համարը, ծառայության մատուցման սկիզբ, ավարտ), կազմակերպությունների, ծառայությունների ծածկույթի (քառանիշ կոդ) և ծառայության անվանման/տեսակի (յոթանիշ կոդ)) վերաբերյալ տեղեկատվությունը դեռևս ամբողջությամբ հասանելի չէ՝ բժշկական գաղտնիք հանդիսանալու պատճառաբանությամբ: Ըստ այդմ, սահմանափակվել է ծառայությունների ձեռքբերման պայմանագրերի շրջանակում պետական բյուջեից կատարված վճարումների օրինականության՝ հաշվետվությունների արժանահավատության վերաբերյալ կարծիքի ձևավորման հնարավորությունը: Մասնավորապես, հնարավոր չի եղել գնահատել թե արդյո՞ք առկա են համընկնումներ պետական բյուջեից միևնույն ծառայության դիմաց, նույն շահառուին, նույն ժամանակահատվածում՝ վճարովի հիմունքներով մատուցված, ՀՀ-ում չգտնվող անձանց, զինծառայողներին և նրանց հավասարեցված անձանց դեպքերում կատարված վճարումների հետ:

ՀՀ պետական բյուջեով առողջապահության ոլորտի համապատասխան ծրագրերի գծով նախատեսված միջոցների սահմաններում պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գները և նորմատիվները, ապահովագրական գումարը և ապահովագրավճարը չեն հաստատվել մշտական գործող գնագոյացման հանձնաժողովի կողմից իրականացված հաշվարկների հիման վրա:

Արձանագրված անհամապատասխանություններն ու այլ փաստերը ներկայացված են սույն ընթացիկ եզրակացության VI և VII բաժիններում: Խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

---

[3] *Հաշվեքննությունը նպատակ է հետապնդել հաշվեքննության առարկային վերաբերելի տեղեկատվության ներկայացուցչական ընտրանքով (100%-ից փոքր) ձեռք բերել բավարար, համապատասխան հաշվեքննության ապացույցներ, որոնց կուտակմամբ ձևավորվելու է պետական բյուջեի տարեկան կատարման վերաբերյալ եզրակացությունը՝ ներառյալ հաշվեքննության կարծիքը, որով պետք է արտահայտվի ողջամիտ (ոչ բացարձակ) հավաստիացում առ այն, թե պետական բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը, բոլոր էական առումներով, ներկայացնու՞մ է արդյոք ՀՀ պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության ճշմարիտ ու իրական պատկերը:*

5. ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նախարարությանը, որպես ծրագրերի կատարողի, 2024 թվականի պետական բյուջեի վեց ամիսների պլանով նախատեսվել է 64,150,575.20 հազ. դրամ, ճշտված պլանը կազմել է 63,997,514.30 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 61,140,486.25 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 61,282,954.76[4] հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 69,926,231.43 հազ. դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ճշտված պլանի նկատմամբ դրամարկղային ծախսը կազմել է 95.76%, ըստ ծրագրերի ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Նախարարության 2024 թվականի պետական բյուջեի վեց ամիսների ցուցանիշները

(հազար դրամ)

Ծրագրի վերջնարդյունքի համար	ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պլան	Ճշտված պլան	Փաստ (դրամարկղային ծախս)	Փաստացի ծախս
	Ընդամենը	**64,150,575.2**	**63,997,514.3**	**61,282,954.8**	**69,926,231.4**
1003	Հանրային առողջության պահպանում	2,756,879.90	2,731,879.90	2,671,634.83	2,005,614.39
1015	Սոցիալական փաթեթների ապահովում	-	11,250.00	8,787.50	10,577.00
1053	Առողջապահության համակարգի արդիականացման և արդյունավետության բարձրացման ծրագիր	1,484,499.00	1,533,699.00	1,093,253.52	1,068,686.12
1099	Առողջության առաջնային պահպանում	14,496,897.10	14,496,897.10	13,924,089.13	15,279,862.23
1110	Այլընտրանքային աշխատանքային ծառայություն	3,420.00	1,440.00	900.00	1,080.00
1126	Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ	1,225,405.90	1,028,875.00	852,978.23	1,201,806.70
1142	Դատաբժշկական և ախտաբանաանատոմիական ծառայություններ	262,093.40	262,093.40	258,928.30	289,795.00
1188	Դեղապահովում	2,285,000.00	2,285,000.00	1,587,998.01	1,712,717.82
1191	Խորհրդատվական, մասնագիտական աջակցություն և հետազոտություններ	132,349.30	142,349.30	134,165.75	165,364.68
1200	Մոր և մանկան առողջության պահպանում	10,549,458.00	10,549,458.00	10,071,321.47	10,986,157.27
1201	Շտապ բժշկական օգնություն	2,434,228.20	2,434,228.20	2,434,225.50	2,799,285.30
1202	Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում	9,805,345.50	9,805,345.50	9,799,833.95	11,731,410.05
1207	Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն	17,682,131.80	17,682,131.80	17,429,836.47	21,181,605.67
1208	Վարակիչ հիվանդությունների կանխարգելման ծրագիր	1,032,867.10	1,032,867.10	1,015,002.10	1,492,269.20

[4] Դրամարկղային ծախսի ցուցանիշում ներառված է նաև «Առողջապահության համակարգի արդիականացման և արդյունավետության բարձրացման ծրագրի» (1053) շրջանակում վարկային (85,354.8 հազ. դրամ) և դրամաշնորհային (882,265.71 հազ. դրամ) միջոցներից կատարված ծախսերը:

Համաձայն Նախարարության 2024 թվականի վեց ամիսների եկամուտների վերաբերյալ հաշվետվության՝ եկամուտները կազմել են 326,464.46 հազ.դրամ՝ ծրագրված 474,839.00 հազ. դրամի դիմաց:

Նախարարության եկամուտների վերաբերյալ ֆինանսական ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Նախարարության 2024 թվականի վեց ամիսների եկամուտները

Խմբի և ենթախմբի անվանումները		Փաստացի (հազար դրամ)	Տարեկան ծրագրված (հազար դրամ	Կատարման տոկոս
Ընդամենը		**326,464.46**	**474,839.00**	**68.75**
Պետական տուրքեր, որից՝		314,192.45	474,839.00	66.17
1	Անվտանգության բնագավառում լիցենզիաներ տրամադրելու համար	3,410.84	57,600.00	2.8
2	Դեղերի, բժշկական սարքերի, առարկաների, գործիքների պետական գրանցման համար	22,334.63	57,705.00	17.43
3	Առողջապահության բնագավառում լիցենզիա	158,144.74	344,079.00	24.05
4	Դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական	23,467.00	14,825.50	78.58
5	Այլ ծառայությունների կամ գործողությունների համար (Դեղ. բժշկ. արտադր. փորձ. ԵԱՏՄ կարգով)	106,405.24	0.00	-
6	Պատշաճ գործունեության հավաստագիր տալու համար	430.00	630.00	33.33
Շահաբաժիններ բաժնետիրական ընկերություններում		12,032.08	0.00	-
Ոչ պաշտոնական դրամաշնորհներ		239.93	0.00	-

6. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

6.1 «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով նախատեսված համակարգին անցման վերաբերյալ

Նախարարության կողմից չի պահպանվել «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը, համաձայն որի «Կազմակերպությունները պարտավոր են հաշվապահական հաշվառումը վարել հաշվապահական հաշվառման ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու հնարավորություն ընձեռող համակարգչային ծրագրերով»:

Հիմք ընդունելով «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասը՝ 2014 թվականի հուլիսի 23-ին ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 463-Ն հրամանով հաստատվել է հանրային հատվածի կազմակերպությունների կողմից հանրային հատվածի հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցման ժամանակացույցը, համաձայն որի Նախարարության մասով հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցման հաշվետու ժամանակաշրջանի սկիզբ է սահմանվել 2017 թվականի հունվարի 1-ը:

Հանրային հատվածի կազմակերպությունների հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը դրանց վերարտադրման գործող պայմաններին և իրական արժեքներին համապատասխանեցնելու, ինչպես նաև «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 4-րդ հոդվածի 1-ին մասի և 14-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների կատարումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 17-ի № 264-Ն որոշմամբ սահմանվել է, « … որ օրենքով սահմանված հանրային հատվածի կազմակերպություններն օրենքի համաձայն սահմանված ժամանակացույցով նախատեսված՝ հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցման տարվա հունվարի 1-ի դրությամբ պարտավոր են՝

1) հաշվապահական հաշվառման նպատակով գույքագրել, վերագնահատել հիմնական միջոցները և դրանց արդյունքներն արտացոլել նոր համակարգին անցնելու տարվա ֆինանսական հաշվետվություններում: Հիմնական միջոցների գույքագրումն ու վերագնահատումն անցկացնել հաշվապահական հաշվառումը կարգավորող և համակարգող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից օրենքի համաձայն սահմանված իրավական ակտերի պահանջներին համապատասխան.

2) հիմնական միջոցների գույքագրումը և վերագնահատումն ավարտել մինչև հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցման տարվա ապրիլի 1-ը՝… »:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ Նախարարությունն առայժմ ամբողջությամբ անցում չի կատարել հաշվապահական հաշվառման նոր համակարգին, մասնավորապես հիմնական միջոցների (այդ թվում պետությանը սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների) ճանաչումը, դրանց հաշվեկշռային արժեքների, մաշվածության գումարների որոշումը և հաշվային պլանի համապատասխան հաշիվներում գրանցումները չեն կատարվել ՀՀՀՀՀՀՀՍ-ի սահմանումներին, չափանիշներին և հաշվային պլանի կիրառման հրահանգին համապատասխան:

Հարկ է նշել, որ Նախարարությունում 2023 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության վերաբերյալ կազմված ընթացիկ եզրակացությունում նշված անհամապատասխանության վերացման ուղղությամբ Նախարարությունը պարզաբանել էր, որ « … «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը մասամբ կատարված է, հաշվի առնելով նախարարության կողմից իրականացվող աշխատանքների մեծածավալ լինելը, հաշվապահական հաշվառումն իրականացնող ստորաբաժանման կողմից իրականացվում է համակարգի փուլային ներդրում, մասնավորապես. հաշվապահական հաշվառման էլեկտրոնային համակարգ արդեն իսկ ներդրված է, իրականացվում են ծրագրային կարգաբերման աշխատանքներ»:

Նախարարության դիրքորոշումը՝ *«…Առողջապահության նախարարության ֆինանսատնտեսագիտական վարչության հաշվապահական հաշվառման բաժինը սույն թվականի հունվարի 1-ից հաշվապահական հաշվառումն ամբողջությամբ իրականացնում է հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտին համապատասխան, բացառությամբ հիմնական միջոցների: Հաշվի առնելով նախարարության առանձնահատկությունները՝ անցումային շրջանը բավականին աշխատատար ու ժամանակատար էր, քանի որ ամբողջ տարվա ընթացքում կատարվել է կենտրոնական ապարատի, կենտրոնացված կարգով դեղորայքի ձեռքբերման, պատվաստանյութերի ձեռքբերման, առողջապահական կազմակերպությունների վերազինման, հանրային առողջության պահպանման ծրագրերի համապատասխանեցում նոր ծրագրին, ինչն էլ հանդիսացել է պատճառ, որ հիմնական միջոցների վարումը ժամանակի սղության պատճառով դեռ չի իրականացվում հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտին համապատասխան: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ 2024 թվականի ընթացքում նախատեսվում է անցկացնել գույքագրում, ինչից հետո հիմնական միջոցների հաշվառումը նույնպես աստիճանաբար կսկսվի իրականացվել հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտին համապատասխան»:*

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝ *Ընդունվել է ի գիտություն:*

6.2 Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող՝ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական հաշվետվողականության վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2011 թվականի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական հաշվետվության օրինակելի ձևը հաստատելու մասին» № 1058-Ն որոշման 2-րդ կետի պահանջների մասով, ըստ որի կազմակերպությունների տարեկան հաշվետվությունները Նախարարության կողմից ամփոփվում և տեղադրվում են Հայաստանի Հանրապետության

առողջապահության նախարարության պաշտոնական կայքէջում մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 31-ը:

ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 28-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական հաշվետվության օրինակելի ձևը հաստատելու մասին» № 1058-Ն որոշման 2-րդ կետով սահմանվել է, որ՝

«1) պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունները սույն որոշման 1-ին կետով հաստատված օրինակելի ձևով կազմված հաշվետվությունները (եռամսյակային պարբերականությամբ՝ աճողական) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն են ներկայացնում մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը, իսկ տարեկան հաշվետվությունները՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 25-ը,

2) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը կազմակերպությունների տարեկան հաշվետվություններն ամփոփում և տեղադրում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պաշտոնական կայքէջում մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 31-ը»:

Նույն որոշման 2.1-րդ կետով հանձնարարվել է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին ապահովել ֆինանսատնտեսական հաշվետվություն ներկայացնելու պարտավորության ամրագրումը պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագրերում:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ Նախարարության պաշտոնական կայքէջում 2024 թվականի հոկտեմբերի 2-ի դրությամբ հիմնականում հրապարակված են 2022 թվականին վերաբերվող բժշկական կազմակերպությունների հաշվետվությունները:

Հարկ է նշել, որ Նախարարությունում 2024 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննության վերաբերյալ կազմված ընթացիկ եզրակացությունում նշված անհամապատասխանության վերացման ուղղությամբ Նախարարությունը որևէ պարզաբանում չէր ներկայացրել:

Նախարարության դիրքորոշումը՝ *« ... ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 28-ի 1058-Ն որոշման կատարման մասով իրականացվում են ԱՐՄԵԴ համակարգի հետ համադրման աշխատանքներ, որի արդյունքում հնարավոր կլինի հաշվետվություններ գեներացնել մեկ փաստաթղթում: Միաժամանակ հայտնում եմ, որ նախատեսվում է փոփոխել 1058-Ն որոշումը, այլ կարգավորումներ սահմանելու նպատակով»:*

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝ *Ընդունվել է ի գիտություն:*

7. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

Փորձարարական կարգով պայմանագրային գումարով բյուջեի չսահմանափակման սկզբունքով փոխհատուցվող ենթամիջոցառումների ցանկի, դրանց շրջանակներում ըստ առանձին եռամսյակների հատկացվող գումարների չափաքանակների վերաբերյալ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի № 318-Ն № 2 հավելվածի V.1-ին գլխի, 2023 թվականի դեկտեմբերի 28-ի № 2344-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթները ՀՀ առողջապահության նախարարի 2024 թվականի հունվարի 31-ի № 488-Լ հրամանով հաստատվել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «Առողջապահություն» բաժնի մի շարք ծրագրերում/միջոցառումներում/ենթամիջոցառումներում ընգրկված շահառուներին փորձարարական կարգով պայմանագրային գումարի չսահմափակման սկզբունքով ծառայություններ մատուցելու վերաբերյալ հրապարակային օֆերտայով կնքվող պայմանագրի օրինակելի ձևը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 2-ով հաստատվել է փորձարարական կարգով պայմանագրային գումարով բյուջեի չսահմանափակման սկզբունքով փոխհատուցվող ենթամիջոցառումների ցանկը, դրանց շրջանակներում ըստ առանձին եռամսյակների հատկացվող գումարների չափաքանակները, իսկ Պայմանագրի 1.7-րդ կետով սահմանվել է, որ «Պայմանագրային գումարով բյուջեի չսահմանափակման սկզբունքով (օֆերտա) Պայմանագրի 1.1-ին կետով սահմանված ծրագրերով/ միջոցառումներով/ ենթամիջոցառումներով փոխհատուցվող կազմակերպությունների կողմից մատուցվող (մատուցվելիք) ծառայությունների ընդհանուր արժեքը տվյալ ենթամիջոցառման մասով եռամսյակի համար (աճողական) հատկացված գումարը 30%-ով գերազանցելու դեպքում տվյալ ծրագրերով/միջոցառումներով/ենթամիջոցառումներով ծառայություններ մատուցող կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից ծանուցումից հետո ծառայությունները մատուցում են Որոշման 3-րդ կետի 4-րդ ենթակետով հաստատված հերթագրման եղանակով: Սույն կետի մասով Նախարարի հրամանով առանձին միջոցառումների կամ ենթամիջոցառումների մասով չափաքանակների սահմանված լինելու դեպքում որպես հաստատված տարեկան գումար ընդունվում է տվյալ միջոցառման կամ ենթամիջոցառման հաստատված մեծությունը»:

Հաշվեքննության ընթացքում Նախարարությունից ստացված պարզաբանման համաձայն՝ «Փորձարարական օֆերտայի պայմանագրի հավելված 2-ով հաստատված փորձարարական կարգով պայմանագրային գումարով բյուջեի չսահմանափակման սկզբունքով փոխհատուցվող ենթամիջոցառումների ցանկը, դրանց շրջանակներում ըստ առանձին եռամսյակների հատկացվող գումարների չափաքանակները սահմանվել են առաջին և երկրորդ եռամսյակների կտրվածքով (փորձարարական ծրագրի գործողության ժամկետով)՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի № 2323-Ն որոշմամբ հաստատված 2024 թվականի պետական բյուջեի ծախսերի

եռամսյակային (աճողական) համամասնություններն՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման տարրերի, ծրագրերի, միջոցառումների, բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների»: Իսկ 2024 թվականի 1-ին եռամսյակում միջոցառումների/ենթամիջոցառումների համար հատկացված չափաքանակների 30%-ով գերազանցելու դեպքերի մասով տրամադրվել էր տեղեկատվություն, որ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի № 318-Ն որոշման հավելված 4-ի 3-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն առողջապահության նախարարի 2024 թվականի ապրիլի 16-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման փորձարարական կարգով պայմանագրային գումարով բյուջեի չսահմանափակման սկզբունքով փոխհատուցվող հերթագրման ենթակա միջոցառումների/ենթամիջոցառումների ցանկերը և հերթագրման օրական առավելագույն սահմանաչափերը հաստատելու մասին» № 2177-Լ հրամանով (կցվում է) հաստատվել են 1306-«Արտահիվանդանոցային դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ 18 և բարձր տարիքի անձանց» և 1327-«Վերականգնողական բժշկական օգնություն» ենթամիջոցառումների հերթագրման օրական առավելագույն սահմանաչափերը»:

Հաշվեքննությամբ ընտրանքային կարգով միջոցառումների ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2024 թվականի 1-ին կիսամյակում առկա են կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների ընդհանուր արժեքը տվյալ ենթամիջոցառման մասով եռամսյակի համար (աճողական) հատկացված գումարը 30%-ով գերազանցելու դեպքեր, սակայն նշված միջոցառումների/ենթամիջոցառումների մասով ծանուցումներ չեն կատարվել (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3

քառանիշ կոդ	Ըստ փաստացի կատարողականի փոխհատուցվող ամբուլատոր պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ	Առաջին կիսամյակ նախատեսված	Առաջին կիսամյակ կատարող-ական/Արմեդ	Կատարողական 16-12.23-30.06.24թթ /Արմեդ/	Տարբերություն	2024 թ I կիս. համամասնու-թյան նկատմամբ
1203	Ընտանեկան բժիշկների կողմից լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների ուղեգրում	226,924.5	335,388.84	352,736.35	125,811.85	55.44%
1204	Անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվող դեղեր/	761,202.7	1,006,821.03	1,061,343.5	300,140.8	39.43%
1228	Մինչամուսնական խորհրդատվության և հետազոտությունների փաթեթ	394.8	1,719.3	1,778.6	1383.8	350.51%

Նախարարության դիրքորոշումը՝ *« … հաշվեքննության ընթացքում հանձնաժողովի կողմից ընտրանքային կարգով միջոցառումների ուսումնասիրության արդյունքում արձանագրած «1203-Ընտանեկան բժիշների կողմից լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների ուղեգրում», «1204-Ավճար և արտոնյալ պայմաններով տրամադրվող դեղեր» և «1228-Մինչամուսնական խորհրդատվության և հետազոտությունների փաթեթ» ենթամիջոցառումները համաձայն 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման N4 հավելվածով հաստատված «**Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման նպատակով բնակչության հերթագրման կարգ**»-ի 5-րդ կետի 6-րդ ենթակետի՝ հերթագրման ենթակա չեն»:*

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝ *Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի № 318-Ն որոշման 36.2-րդ կետի՝ «Սկսած 2024 թվականի*

հունվարի 1-ից՝ փորձարարական եղանակով մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը պայմանագրային գումարի չսահմանափակման սկզբունքը կիրառվում է նաև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի «Առողջապահություն» բաժնի «Ըստ փաստացի կատարողականի փոխհատուցվող ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ» ... միջոցառումների համար, իսկ գումարները նախատեսվում են բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով», իսկ նույն որոշման 36.3-րդ կետով սահմանվել է՝ «...36.1-ին և 36.2-րդ կետերով նախատեսված ծրագրերում /միջոցառումներում/ենթամիջոցառումներում ընդգրկված շահառուներին ծառայություններ կարող են մատուցել այն կազմակերպությունները, որոնք բավարարում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից հրապարակված հրապարակային օֆերտայի պայմանագրով սահմանված որակավորման պայմաններին: Ծառայություններ մատուցելու ցանկություն հայտնած կազմակերպությունների և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 453-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից հրապարակված հրապարակային օֆերտայի հիման վրա կնքված պայմանագրով: իսկ պայմանագրով սահմանվել է, որ պայմանագրային գումարով բյուջեի չսահմանափակման սկզբունքով (օֆերտա) պայմանագրով սահմանված ծրագրերով/միջոցառումներով/ենթամիջոցառումներով փոխհատուցվող կազմակերպությունների կողմից մատուցվող (մատուցվելիք) ծառայությունների ընդհանուր արժեքը տվյալ ենթամիջոցառման մասով եռամսյակի համար (աճողական) հատկացված գումարը 30%-ով գերազանցելու դեպքում տվյալ ծրագրերով/միջոցառումներով/ենթամիջոցառումներով ծառայություններ մատուցող կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից ծանուցումից հետո ծառայությունները մատուցում են հերթագրման եղանակով՝ առանց որևէ բացառության: Նախարարության կողմից ներկայացված պարզաբանումը չի բխում պայմանագրով սահմանված պայմանից:

8. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության շրջանակում ուսումնասիրվել է նաև նախորդ՝ 2024 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությամբ արձանագրված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման, առաջարկությունների իրականացման հետ կապված հարցերի ընթացքը:

Հետհսկողական գործընթացի շրջանակում հարկ է նշել, որ՝

- ՀՀ պետական բյուջեով առողջապահության ոլորտի համապատասխան ծրագրերի գծով նախատեսված միջոցների սահմաններում պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գները և նորմատիվները, ապահովագրական գումարը և ապահովագրավճարը չեն հաստատվել մշտական գործող գնագոյացման հանձնաժողովի կողմից իրականացված հաշվարկների հիման վրա,
- ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 28-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական հաշվետվության օրինակելի ձևը հաստատելու մասին» № 1058-Ն որոշման համաձայն բժշկական կազմակերպությունների կողմից ներկայացվող 2023 թվականի ֆինանսատնտեսական հաշվետվությունները ՀՀ առողջապահության նախարարության պաշտոնական կայքէջում տեղադրված չեն:

Հաշվեքննիչ պալատի 2024 թվականի օգոստոսի 5-ի թիվ ՀՊԵ/01/496-2024 գրությամբ՝ Նախարարությանն է առաքվել ՀՀ հաշվեքննիչ պալատի հուլիսի 30-ի № 83-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունում 2024 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունը», որով Նախարարությանն առաջարկվել էր տվյալ ընթացիկ եզրակացությունում ներկայացված առաջարկությունների հիման վրա մշակել և հաստատել միջոցառումների ծրագիր, որը կպարունակի յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու ստորաբաժանում(ներ)ը և միջոցառման կատարման ժամանակացույցը: Վերոգրյալի մասով, Նախարարության կողմից տեղեկատվություն ՀՊ-ին չի ներկայացվել:

9. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հավելված 1

Հաշվեքննության առարկայի գծով սույն և 2024թ. պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննությունների արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացություններում Հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացված առաջարկությունների կատարման ընթացքի վերաբերյալ

№	Հաշվեքննիչ պալատի առաջարկությունները	Նախարարության դիրքորոշումը			Ծանոթագրություն ՀՊ մեկնաբանությունը
		Ընդունելի է/ Ընդունելի չէ	Կատարված է/ Ընթացքում է	Պարզաբանում / Բացատրություն	
1	Հաստատել բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագրային գների հիմնավորվածությունն ապահովող գնագոյացման մեթոդաբանությունը:	*ԸՆԴՈՒՆԵԼԻ Է*	*ԸՆԹԱՑՔՈՒՄ Է*	Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագրային գների հիմնավորվածությունն ապահովող գնագոյացման մեթոդաբանության ապահովման նպատակով պարբերաբար, ըստ անհրաժեշտության իրականացվում են բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գնագոյացման հանձնաժողովի նիստեր	Անդրադարձ կկատարվի հաջորդիվ իրականացվող հաշվեքննություն-ների ընթացքում
2	Ապահովել «ԱՐՄԵԴ» էլեկտրոնային առողջապահական համակարգում առկա տվյալների (ծառայությունների քառանիշ, յոթանիշ ծածկագրերի շտեմարան) ինքնաշխատ եղանակով պետական գանձապետական էլեկտրոնային վճարումների, գանձապետական հաշվետվությունների համակարգերի, նախարարությունում ներդրված հաշվապահական հաշվառում վարման համակարգչային ծրագրերի հետ փոխգործելիությունը (համակցելիությունը):	*ԸՆԴՈՒՆԵԼԻ Է*	*ԿԱՏԱՐՎԱԾ Է*	«Արմեդ» էլեկտրոնային առողջապահության համակարգը արդեն իսկ համակցված է գանձապետական հաշվետվությունների համակարգերի հետ, փոխգործելիությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «Առողջապահություն» բաժնի ծրագրերի և միջոցառումների շրջանակներում, որոնք ձևավորվում են «Արմեդ» էլեկտրոնային առողջապահության համակարգում ծառայությունների յոթանիշ ծածկագրերով ձևավորված քառանիշ ծածկագրերի խմբավորման միջոցով:	Անդրադարձ կկատարվի հաջորդիվ իրականացվող հաշվեքննություն-ների ընթացքում

Հավելված 2

Հաշվեքննության առարկայի գծով սույն և 2024 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննությունների արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացություններում Հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված անհամապատասխանությունների վերացման վերաբերյալ

№	Հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված անհամապատասխանություն / խեղաթյուրում	Նախարարության դիրքորոշումը		Ծանոթագրություն (ՀՊ մեկնաբանությունը)
		վերացված է/ վերացված չէ/ ընթացքում է	Պարզաբանում / Բացատրություն	
1	Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի № 318-Ն որոշման «III. Բժշկական օգնության և սպասարկման գների հաստատման կարգի» բաժնի 15-րդ կետով սահմանված և նախարարի կողմից հրամանով հաստատված գների միջև, այսինքն, ՀՀ պետական բյուջեով առողջապահության ոլորտի համապատասխան ծրագրերի գծով նախատեսված միջոցների սահմաններում պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գները և նորմատիվները, ապահովագրական գումարը և ապահովագրավճարը չեն հաստատվել մշտական գործող գնագոյացման հանձնաժողովի կողմից իրականացված հաշվարկների հիման վրա:	*ԸՆԹԱՑՔՈՒՄ Է*	2024 թվականի օգոստոսից անցկացվում են պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գնագոյացման հանձնաժողովի նիստեր:	Անդրադարձ կկատարվի հաջորդիվ իրականացվող հաշվեքննություն-ների ընթացքում
2	Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2011 թվականի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական հաշվետվության օրինակելի ձևը հաստատելու մասին» № 1058-Ն որոշման 2-րդ կետի պահանջների մասով, ըստ որի կազմակերպությունների տարեկան հաշվետվություններն Նախարարության կողմից ամփոփվում և տեղադրվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պաշտոնական կայքէջում մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 31-ը:	*ԸՆԹԱՑՔՈՒՄ Է*	ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 28-ի 1058-Ն որոշման կատարման մասով իրականացվում են ԱՐՄԵԴ համակարգի հետ համադրման աշխատանքներ, որի արդյունքում հնարավոր կլինի հաշվետվությունները գեներացնել մեկ փաստաթղթում և հրապարակել: Միաժամանակ հայտնում եմ, որ նախատեսվում է փոփոխել 1058-Ն որոշումը, այլ կարգավորումներ սահմանելու նպատակով:	ՎԵՐԱՑՎԱԾ ՉԷ

10. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը՝

Սույն ընթացիկ եզրակացությամբ, ինչպես նաև 2023 թվականի պետական բյուջեի տարեկան և 2024 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննություններով արձանագրված անհամապատասխանությունների վերացման, ներկայացված առաջարկությունների իրագործման նպատակով հաստատել միջոցառումների ծրագիր՝ յուրաքանչյուր միջոցառման համար սահմանելով պատասխանատու ստորաբաժանում(ներ)ը և միջոցառման կատարման ժամանակացույցը:

Գագիկ Բարսեղյան _____
Հաշվեքննիչ պալատի անդամ

«31» հոկտեմբեր, 2024 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ,
Մ.Բաղրամյան 19, Երևան
Հայաստանի Հանրապետություն